ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2022թվականի N 14-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությանը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝

1) Եկամուտների գծով՝ 254319,213 հազ. դրամ

2) Ծախսերի գծով՝ 233695,109 հազ. դրամ

2. Հաստատել բյուջեի տարեկան հաշվետվությունները համաձայն հետևյալ հավելվածների.

1) Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ առանձին եկամտատեսակների՝ հավելված 1,

2) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման՝ հավելված 2,

3) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հավելված 3,

4) Համայնքի բյուջեի հավելուրդի կամ դեֆիցիտի՝ /պակասուրդի/ կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված 4,

5) Համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրների կամ հավելուրդի օգտագործման ուղղությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված 5:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱԶԻԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐՄԱՆ

ՁԵՅՆԱԼՅԱՆ ՄԱՍԻՍ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

ՂՈՒԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՐԱԳԱԾ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԱՄ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ԼՈՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

Հաշվետվություն
(Տեղեկանք հիմնավորում)
Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան

Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածներով ամրագրված դրույթները:

Տեղ համայնքի 2021թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 254319,3 հազ. դրամ՝ ծրագրված (ճշտված) 275434,4 հազ. դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 92,3%: Ընդ որում՝ Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված (ճշտված) 213005,8 հազ. դրամ `ապահովելով 93,6%:

Տեղ համայնքի 2021 թվականի ճշտված բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 65244,8 հազ. դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 64965,8 հազ. դրամ կամ 99,5%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավել է 2020 թվականի համապատասխան ցուցանիշից 3082,0 հազ. դրամով:

Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 233695,1 հազ. դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 74,1%-ը: Նախատեսված և փաստացի ծախսված գումարների տարբերությունները հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով, պատվիրակված լիազորությունների մասամբ չիրականացմամբ:

Հարկ է նշել, որ 2021 թվականի բյուջեի ծրագրված (ճշտված) 10241,1 հազ. դրամ պակասուրդի դիմաց բյուջեն փաստացի կատարվել է 59858,0 հազ. դրամ հավելուրդ:

Ստորև ներկայացվում է Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Եկամուտներ

Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի փաստացի եկամուտների 27,3%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և տուրքերի հաշվին, որից 8,8%-ը՝ գույքային հարկեր անշարժ գույքից, 13,7%-ը՝ գույքային հարկեր այլ գույքից, 4,1%-ը՝ տեղական տուրքերից, 0,7%-ը՝ համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի եկամուտների 72,7%-ը ձևավորվել է պաշտոնական դրամաշնորհներից և պետության կողմից տրվող դոտացիաներից:

Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտների հավաքագրումը 2021 թվականին կազմել է, մասնավորապես գույքային հարկեր անշարժ գույքից հավցաքագրվել է 41257,549 հազ. դրամ՝ որը կազմել է ծրագրվածի 90,3%-ը, որը կազմում է հարկային եկամուտների 33,4%-ը, իսկ փոխադրամիջոցների համար գույքահարկը հավաքագրվել է ծրագրվածից 17855,475 հազ. դրամով ավելի, որը իր հերթին կազմում է հարկային եկամուտների 48,8%-ը:

Տեղական տուրքերի մասով եկամտի հավաքագրումը ևս գերակատարվել է՝ փաստացի կազմելով 919,5 հազ. դրամ ծրագրված 753,6 հազ. դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 122%: Ոգելից խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տուրքերի մասով տուրքերը կազմել են 283,600 հազ. դրամ ծրագրված 233,6 հազ. դրամի դիմաց:

Այսպիսով, հարկային եկամուտների և տուրքերի մասով 2021 թվականի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 41257,549 հազ. դրամ՝ ծրագրված 45679,1 հազ. դրամի նկատմամբ:

Այդ թվում

- Անշարժ գույքի հարկի և գույքահարկի գծով փաստացի կատարողական ցուցանիշները կաղմել են 17257,549 հազ. դրամ, ծրագրված (ճշտված) 19701,4 հազ. դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 87,5%:
- Պետական տուրքերի գծով փաստացի կատարման ցուցանիշները կաղմել են 919,5 հազար դրամ՝ նախատեսված 753,6 հազ. դրամի դիամաց, կամ կատարողականը կազմել է 122%:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պաշտոնական դրամաշնորհների մասով մուտքերը կազմել են 168124,9 հազ. դրամ, ծրագրված (ճշտված) 186281,4 հազ. դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 162325,5 հազ. դրամ, համայնքի բյուջե մուտքգրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով 1000000 ՀՀ դրամ, համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացած միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով 18370,6 հազ. դրամ, իսկ ՀՀ պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակովվ տրամադրվող նպատակային հատկացումներից (սուբվենցիաներից) մուտքերը՝ 21370,6 հազ. դրամ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ 37812,0 հազ. դրամ:

Այլ եկամուտներ.

Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեով այլ եկամուտների գծով նախատեսված էր 275434,4 հազ. դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 254319,3 հազ. դրամ:

Որից՝

Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 2252700 ՀՀ դրամ,

- Տեղական վճարների գծով փաստացի եկամուտները կազմել են ՝ 2,292,000 հազար դրամ, նախատեսված 2800,0 հազ. դրամի նկատմամբ կամ նախատեսված 81,8%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է աղբահանության վճարների, ինչպես նաև ավտոկայանատեղի վճարների գծով կանխատեսված և փաստացի հավաքագրված ցուցանիշների տարբերությամբ:

Ծախսեր

Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 233695,1 հազ. դրամի ծախսեր՝ ծրագրված (ճշտված) 315511,7 հազ. դրամի դիմաց կամ ծրագրվածի 74,1%-ը: Փաստացի կատարված ծախսերը եկամուտների տեսակարար կշռում կազմում են 90,9%: Ընդամենը փաստացի ծախսերից 227570,3 ՀՀ դրամն ուղղվել են ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), իսկ 37812000 ՀՀ դրամը՝ կապիտալ բնույթի զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե):

Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի ծախսերի ծավալներում գերակշիռ են սոցիալական բնագավառի (կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության) ծախսերը, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է 40,8%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 33,7%, շրջակա միջավայրի պաշտպանությունն ուղղված ծախսերինը՝ 12,9%:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**